ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ
ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՆՈՐԸՆՏԻՐ
ՆԱԽԱԳԱՀ ԿԱՌԼԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ

ՄԵԾԱՀԱՐԳ ԿԱՌԼԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ,
ՆԱԽԱԳԱՀ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ
ԿՈՄԻՏԵԻ

Երևան

Ձերմ գոհունակությամբ ողջունում ենք Ձեր շատ պատասխանատու նոր պաշտոնը և շնորհավորում ենք Ձեզ հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Սրտանց մաղթում ենք Ձեզ հայրենանվեր անսպառ եռանդ, որպեսզի Ձեր բարձր հեղինակությամբ սկիզբ առնե գործարար մի նոր շրջան արտասահմանի հայության կյանքը արգասավորող վերածնված մայր երկրի մշակույթի լույսերով:

Խորին հարգանք՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
12 դեկտեմբերի 1985 թ.